Արձանագրություն N 1

ՕՐԱԿԱՐԳ
Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի նիստի
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
22-ը հունվարի 2019 թվական, ժամը 15.00
(խորհրդակցությունների սենյակ 325)

1. Բացման խոսք

/Խորհրդի նախագահ Ա. Մանուկյան/

2. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող ընդունված իրավական ակտերի մասին:

/Ա.Թանաշյան, Ն.Դուրյան /

3. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ ոստիկանության կողմից իրականացված աշխատանքները և առկա խնդիրները:

/Ն.Դուրյան/

4. Ելույթներ, մտքերի փոխանակում:

/Խորհրդի անդամներ/

Մասնակցեցին

Զ. Բաթոյանը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար,
Ա. Մանուկյանը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ (*խորհրդի նախագահ*),
Գ. Ավագյանը	ՀՀ առողջապահության նախարարություն աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ,
Գ. Հովակիմյանը	ՀՀ արդարադատության նախարարություն «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի վերականգնողական ծրագրերի իրականացման հարցերով տնօրենի տեղակալ,
Ա. Մուրադյանը	ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Բարսեղյանը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ,
Ն. Դուրյանը	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ,
Դ. Թումասյանը	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության պետ,
Շ. Իսրայելյանը	ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետի տեղակալ,
Լ. Սարգսյանը	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավար,
Ս. Վարդանյանը	«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ,
Լ. Ահարոնյանը	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության համանախագահ,
Տ. Կարապետյանը	«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող,
Ա. Դանոյանը	«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության սոցիալական աշխատող,
Ք. Սարգսյանը	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության վերապատրաստման և կարողությունների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ,
Տ. Աղաբեկյանը	«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպության ծրագրերի ղեկավար,
Կ. Դավթյանը	«Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպության նախագահ,
Ռ. Արզումանյանը	«Հույսի կամուրջ» երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության Դիլիջանի մասնաճյուղի տնօրեն,
Ն. Պետրոսյանը	«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի սոցիալական աշխատող,
Մ. Դավթյանը	«Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի սոցիալական աշխատող,
Ա. Կարապետյանը	«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,

Ս. Ղալթախչյանը	«Երևանի աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն,
Լ. Պետրոսյանը	«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն,
Տ. Ավետիսյանը	«Երևանի «Հատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ -ի սոցիալական աշխատող,
Մ. Մաթոսյանը	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ,
Լ. Սարգսյանը	«Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի ծրագրի պատասխանատու ղեկավար,
Ա.Թանաշյանը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ,
Ա.Մարտիրոսյանը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ,
Գ.Մանուկյանը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
Ծ.Հարությունյանը	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ,
Ա. Խաչատրյանը	ՄԱԿ-ի մարդու իրավունքների փորձագետ:

Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդրանիկ նիստը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված կարգով վարեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զ.Բաթոյանը: Նա իր բացման ելույթում շնորհավորեց խորհրդի անդամներին, այն բոլոր կազմակերպություններին և անձանց խորհրդի ձևավորման կապակցությամբ, ովքեր այս տարիներին իրենց ջանքերն են ներդրել ընտանիքում բռնության երևույթի կանխարգելման և դրա խնդրի կարգավորմանն ուղղված օրենսդրության ընդունման գործում: Նա հույս հատնեց, որ ստեղծված խորհուրդն այն հարթակն է, որտեղ գրանցվելու են ոլորտի ամենալուրջ և հաստատուն հաջողությունները: Տիկին Բաթոյանը ընդգծեց, որ *«Մեր երկրում իրականացված վերջին փոփոխությունները ցույց տվեցին, որ մենք կարող ենք մերժել բռնությունը և դրանով*

հասնել հաջողությունների: Մենք պետք է այս մոտեցումը մշակույթ դարձնենք թե՛ անձնական և ընտանեկան, թե՛ քաղաքացի-պետություն հարաբերություններում: Հույս ունեմ, որ խորհրդի անդամ փորձառու կազմակերպությունների միջոցով կապահովենք նաև այն անհատների կամ կազմակերպությունների մասնակցությունը, ովքեր խորհրդի կազմում չեն, սակայն իրենց փորձառությամբ ուզում են ներդրում ունենալ այս գործընթացում: Մենք որդեգրել ենք բաց, թափանցիկ և մասնակցային աշխատանքի սկզբունքը:»:

Տիկին Բաթոյանը իր խոսքում անդրադարձավ նաև համագործակցության և հանրային քննարկումների կարևորությանը, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման մատչելիությանը և հասանելիությանը:

Այնուհետև, բացման խոսքով ելույթ ունեցավ խորհրդի նախագահ՝ նախարարի առաջին տեղակալի պաշտոնակատար Ա. Մանուկյանը: Նա ողջունեց ներկաներին խորհրդի անդրանիկ նիստի կապակցությամբ, անդրադարձավ խորհրդի առաքելությանը և նպատակին, կարևորելով յուրաքանչյուրի ներդրումը խորհրդի լիարժեք աշխատանքների իրականացման գործում: Նա նշեց, որ պետք է ձգտել ունենալու այնպիսի հասարակություն, որտեղ բոլոր մակարդակներում մերժվում է բռնությունը: Պարոն Մանուկյանը հավելեց. *«Ես լիահույս եմ, որ մենք կարողանալու ենք մեր իրական աշխատանքով խորհուրդը դարձնել այն օրինակելի հարթակը, որտեղ կքննարկվեն ընտանեկան բռնության քաղաքականության հարցերն ու դրանց ուղղված լուծումները»:*

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ Ա.Թանաշյանը: Նա խորհրդի անդամներին ներկայացրեց ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10 N 786-Ն որոշմամբ հաստատված ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի ձևավորման կարգը և գործառույթները, այնուհետև անդրադարձավ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերին: Ա.Թանաշյանը նախ ներկայացրեց այն իրավական ակտերը, որոնք հաստատվել են, մասնավորապես.

- ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու, խորհրդի ձեվավորման կարգը և գործառույթները հաստատելու մասին» N 786-Ն որոշումը, ըստ որի կարգավորվում են ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի ձևավորման և գործառույթների իրականացմանն ուղղված հարաբերությունները,
- ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N1685–Ա որոշումը, ըստ որի հաստատվել է ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի կազմը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի նոյեմբերի 13-ի «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին» N119-Ն հրամանը, ըստ որի հաստատվում է ծրագիր՝ ուղղված բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման

միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը, ինչպես նաև կարգ՝ որով կարգավորվում են ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի կազմակերպման հետ կապված հարաբերությունները,

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի նոյեմբերի 13-ի «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N120-Ն հրամանը, ըստ որի կարգավորվում են ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման գործընթացի իրականացման հետ կապված հարաբերությունները:

Ա. Թանաշյանը նշեց, որ վերջին երկու նորմատիվ հրամանների իրականացումը օրենքով սահմանված կարգով վերապահված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի աջակցության կենտրոններին: Այնուհետև նա անդրադարձավ օրենքի կիրակումն ապահովող իրավական ակտերի նախագծերին, մասնավորապես, «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին», «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» և «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերին: Ա.Թանաշյանը ներկայացրեց վերոհիշյալ նախագծերի մշակման ընթացքում ծագած դժվարությունները, որոնք պայմանավորված են թե՛ օրենսդրական խոչընդոտներով, թե՛ ոլորտի յուրահատկություններով, և այն հանգամանքով, որ դրանք առաջին անգամ են ներդրվում հանրապետությունում: Նա, մասնավորապես, անդրադարձավ «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին, տեղեկացնելով, որ այն մշակվել և դեռևս 2018 թվականի ապրիլ ամսին սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ, որից հետո բազմիցս վերադարձվել է լրամշակման, տարբեր շահագրգիռ մարմինների հետ քննարկման և համաձայնեցման: Սակայն դրանք դրական արդյունք չեն տալիս, քանի որ նախագծով բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում իրականացնելու համար առաջարկվող մեխանիզմների համար խոչընդոտ են հանդիսանում Օրենքի համապատասխան դրույթների ոչ հստակ ձևակերպումները, կամ դրանց բացակայությունը:

Այնուհետև Ա.Թանաշյանը խորհրդի անդամներին ներկայացրեց ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10 N 786-Ն որոշմամբ հաստատված ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի ձևավորման կարգը և գործառույթները: Անդրադառնալով խորհրդի «ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում պետական միասնական քաղաքականության վերաբերյալ քննարկումների և առաջարկների ներկայացնելու» վերաբերյալ գործառույթին՝ տեղեկացրեց, որ մշակվել և սահմանված կարգով շրջանառվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի վեց

գերակայություններից մեկը ընտանիքում բռնության երևույթի կանխարգելումը և դրա դեմ պայքարն է: Դրա հետ կապված Ա.Մանուկյանը, կարևորելով խնդիրն, առաջարկեց քննարկել վերոհիշալ փաստաթղթից այդ գերակայությունը առանձնացնելու և առանձին՝ ընտանքում բռնության կանխարգելման վերաբերյալ ռազմավարական ծրագիր մշակելու հարցը: Զ.Բաթոյանը ևս կարևորեց բարձրացված հարցը և դիմեց խորհրդի անդամներին ներկայացնելու իրենց կարծիքը առանձին ծրագիր մշակելու վերաբերյալ: Խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց դիտարկումները, նշելով նման փաստաթուղթ ունենալու առանձնահատկությունները և անհրաժեշտությունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավար Լ. Սարգսյանը, կարևորելով մշտադիտարկման մեխանիզմների առկայությունն, առաջարկեց նոր մշակվելիք ծրագիրը հաստատել ՀՀ կառավարության որոշմամբ:

Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց մշակել նաև օրենքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների փաթեթ: ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության պետ Դ.Թումասյանը նշեց, որ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակման ընթացքում ծագած խնդիրները պայմանավորված են 2015 թվականին ընդունված ՀՀ Սահմանդարության այն նորմով, ըստ որի օրենքները պետք է ունենան լիազորող դրույթներ, ինչը թույլ է տալիս կառավարության որոշմամբ սահմանել այս կամ այն ընթացակարգը: «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակման ընթացքում ծագած խնդիրները մեծամասամբ պայմանավորված են այդ օրենքում նման դրույթների բացակայությամբ: Նա նշեց, որ օրենքում վերանայման կարիք ունեն հետևյալ մի շարք հարցեր, մասնավորապես.

- ֆիզիկական բռնություն եզրույթը, քանի որ ըստ օրենքի ֆիզիկական բռնություն են համարվում այն արարքները, որոնք նշված են ՀՀ քրեական օրենսգրքում, այն դեպքում երբ ՀՀ քրեական օրենսգիրքն ամբողջությամբ չի ներառում ֆիզիկական բռնության այն դրսևորումները, որոնք կարող են տեղի ունենալ (օրինակ, մեկ ապտակը, որն ինքնին հետևանք չի առաջացրել),
- վերանայման կարիք ունեն ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների կիրառման հիմքերը և փոխկապակցվածությունը,
- ցանկալի է սահմանումներում նշել «ընտանիքում բռնության դեպք» եզրույթը՝ տարընթերցումներից խուսափելու նպատակով,
- որոշ դրույթների կիրարկումն ապահովելու նպատակով (օրինակ, բռնարարի հեռացում, աջակցության տրամադրում և այլն) անհրաժեշտ է վերանայել օրենքը՝ նախատեսելով իրատեսական և որոշակիության պայմանին համապատասխանող կանոններ՝ ուր է տեղափոխվում բռնարարը, ինչ պայմաններով և այլն:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել օրենսդրական դաշտը և մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

Ա.Մանուկանը ամփոփեց բարձրացված հարցերը և նշեց, որ խորհրդի բոլոր անդամները համակարծիք են առանձին ծրագիր և օրենսդրական փաթեթ մշակելու վերաբերյալ:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ նաև ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Դուրյանը և

ներկայացրեց ՀՀ ոստիկանության կողմից մշակված օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերը: Նա տեղեկացրեց, որ ՀՀ ոստիկանությանը վերապահված գործառույթներն իրականացնելու նպատակով, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2018թ. փետրվար-հունիս ամիսների ընթացքում մշակվել են երկու՝ «Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձին ոստիկանության կողմից վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ուղղորդելու կարգը սահմանելու մասին» և «ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1446-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» /մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցների համազգեստի ձևի վերաբերյալ/ ՀՀ կառավարության որոշման նախագծերը: Բացի այդ մշակվել և ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատվել են վեց հրամաններ.

- «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում)ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին»,
- «Ընտանիքում բռնությանն անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին»,
- «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին»,
- «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների/խմբերի/ավագ և միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու մասին»,
- «Ընտանիքում բռնության դեպքերի արձագանքման և բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և ՀՀ ոստիկանության պետի 16.04.2015թ. թիվ 875-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»,
- «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների ձևերը սահմանելու մասին»:

Ն.Դուրյանը նշեց նաև իրավական ակտերի մշակման ընթացքում ծագած խնդիրների մասին: Մասնավորապես, նա անդրադարձավ ընտանիքում բռնություն գործադրած անչափահասների օրենքով սահմանված վերականգնողական կենտրոններ և և ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ ուղղորդելու, ինչպես նաև այդ կառույցների բացակայության հարցին: Ա.Մանուկյանը ներկայացրեց իր տեսակետը խնդրի կարգավորման հարցում և ընդգծեց օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը: Նա առաջարկեց առայժմ օգտագործել առկա ռեսուրսները և ՀՀ ոստիկանությանը, ինչպես նաև խորհրդի անդամներին ներկայացնել նախարարության համակարգի 6 աջակցության կենտրոնների հասցեները և հեռախոսահամարները:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ևս հանդես եկավ Ն.Դուրյանը: Նա խորհրդի անդամներին ներկայացրեց օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ ոստիկանության կողմից իրականացված աշխատանքները և առկա խնդիրները: Ն. Դուրյանը նշեց, որ օրենքը ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 31-ին, որի

դրույթների համաձայն ՀՀ ոստիկանության իրավասու ստորաբաժանումների ծառայողները 2018 թվականի հունիսի 30-ից անցան իրենց գործառույթների իրականացմանը: Նա տեղեկացրեց, որ 2018 թվականի մայիսի 16-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների /խմբերի/ ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար մեկնարկել են վերապատրաստման դասընթացներ՝ ընդհանուր առմամբ, ընթացիկ ժամանակահատվածում, ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների /խմբերի/ ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող 306 ծառայողների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ (վերապատրաստումների անցկացումը կրում է շարունակական բնույթ):

Նա տեղեկացրեց նաև, որ ղեկավար անձնակազմի և ծառայողների համար անցկացվել են սեմինար-պարապմունքներ, որի ընթացքում ներկայացվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի դրույթները, դրանք պրակտիկ գործունեության ընթացքում կիրառելու մեթոդները:

Ն.Դուրյանը կարևորելով ընտանիքում բռնության կանխարգելման գործընթացում միջազգային կառույցների դերը նշեց, որ ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բաձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանությունը համագործակցել է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության, UNDP-ի, ինչպես նաև պետական շահագրգիռ կառույցների այդ թվում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և մի շարք տեղական հասարակական կազմակերպությունների հետ, որ արդյունքում ոստիկանության մասնագիտացված ստորոբաժանման ծառայողների համար մշակվել են ձեռնարկներ և ուղեցույցեր, ընտանիքում բռնության դեպքերը ուսումնասիրելու և ամփոփելու նպատակով մշակվում են հաշվետվության ձևեր: Բացի այդ, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ԱԳ և ԸԲԿ բաժանմունքների /խմբերի/ ծառայողների կողմից «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական ակտերի իմացությունն ապահովելու նպատակով 2018թ. սեպտեմբերի 17-ից կազմակերպվել են ստուգարքներ և ոստիկանության ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանումների 284 ծառայողից ընդունվել է ստուգարք:

Իր ելույթի վերջում Ն.Դուրյանը ներկայացրեց նաև օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 2018 թվականի հունիսի 30-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ ըստ օպերատիվ ամփոփոգրերի գրանցված ընտանիքում բռնության դեպքերի վիճակագրությունը.

h/h	ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանում	Ընտանիքում բռնության վերաբերյալ օպերատիվ ամփոփագրերի թվաքանակը
1.	Երևան քաղաքի վարչություն	428
2.	Արարատի ՄՎ	107
3.	Շիրակի ՄՎ	89
4.	Արմավիրի ՄՎ	87

5.	Կոտայքի ՄՎ	85
6.	Լոռու ՄՎ	79
7.	Գեղարքունիքի ՄՎ	37
8.	Սյունիքի ՄՎ	35
9.	Տավուշի ՄՎ	19
10.	Արագածոտնի ՄՎ	15
11.	Վայոց ձոր ՄՎ	9

Նա նշեց, որ **990** դեպքից **431** դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացվել է նախազգուշացում, իսկ **131** դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ, կազմվել է **562** հաշվառման քարտ:

Եզրափակելով իր խոսքը, Ն.Դուրյանը կրկին նշեց աջակցության կենտրոնների ստեղծման անհրաժեշտության մասին և հաշվի առնելով ընտանիքում բռնության դեպքերի «աշխարհագրությունը»՝ առաջարկեց յուրաքանչյուր մարզում ունենալ առնվազն մեկ աջակցության կենտրոն:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Խորհրդի անդամներին՝

ա/ 10 օրյա ժամկետում խորհրդի քարտուղարությանը ներկայացնել առաջարկներ ընտանիքում բռնության կանխարգելման ծրագրի վերաբերյալ,

բ/ խորհրդի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Խորհրդի քարտուղարությանը՝ ՀՀ ոստիկանությանը, ինչպես նաև խորհրդի անդամներին ներկայացնել նախարարության համակարգի 6 աջակցության կենտրոնների հասցեները և հեռախոսահամարները:

Խորհրդի նախագահ՝ **Ա.Մանուկյան**

/22.01.2019թ./